

սեդեկ կաթողիկոս. « . . . Սաստիկ կ'ըղձայի տեսնել զՉեզ, խօսիլ եւ ի համբոյր ոտից մատչել, սակայն որովհետեւ շատ արգելքներ ունիմ, սիրտս այս թղթոյս մէջ հեղած եմ, եւ քեզի ղրկեցի իմ հաւատարիմ սիրելի Չաքարիա վարդապետս . . . » : Ս. Քահանայապետը Մելքիսեդին պատասխան մը գրեց. որմէ ետեւ Մելքիսեդ 22 Մարտ 1613 թուականաւ պատասխանեց (Ազարեան, անդ, էջ 122, նոյն հեղինակէն առնելով, որուն մէջ կ'ըսէ թէ « Չաքարիա վ. վերագառնալով բերած է » Քահանայապետին թուղթը) : Այս պարագան կը յիշէ Ստեփ. Ռոշքա (սխալ թուականաւ) աւելցընելով՝ որ Չաքարիա վ. երկրորդ անգամ Հռոմ տարած է Մելքիսեդեկի մէկ նամակը, երեք տարի ետքը « 1617 » . Մելքիսեթ կաթողիկոսն առ Պօղոս Ե. առաքէ զՉաքարիա վարդապետն անուանի քարոզատու վասն հնազանդութեան իւրոյ. զոր սիրով ընկալեալ Ս. Փափն, խրատէ զվարդապետն եւ զկաթողիկոսն թղթով, զի զջուր ի սուրբ Պատարագն խառնեսցեն, « զոր խաչեցարն » ի բաց բարձցեն յԵրեքսրբնէն, եւ զայլ սահմանագրութիւնս ուղղափառութեան տայ : Պարգեւէ կաթողիկոսին զխաչ մի ոսկեայ մասնկամբ ի խաչափայտէն քրիստոսի, զգետսս քահանայականս, եւ յանձնեաց զնա թղթովք Պարսից թագաւորին Շահապասին : Վասն որոյ կաթողիկոսն Մելքիսեթ վառեալ ի սէր Ս. Փափին՝ կրկին յետ երից ամաց զնոյն Չաքարիա վ. ն առաքէ առ ի հաստատել պնտագոյնս զիւր